

Թէ Յովնան (Յօնան, Յունան) Եպս. Եւ-  
 դոկիացի (Թօխաթեցի) 1693էն մինչեւ 1702  
 ինչ կեանք անցուցած է, ծանօթ չէ. սակայն  
 Վննետիկի Մխիթարեանց ժամանակագրութե-  
 նէն յայտնի կ'ըլլայ, որ երբ Մխիթար ԱբբաՏայր  
 1701ին ի Կ.Պոլիս իր Միաբանութիւնն սկսաւ  
 եւ իրեն ազգակիցներէն հալածուելով Յու-  
 նաստան անցաւ, հարաւակողմն Մեթոն քաղա-  
 քին մէջ հաստատուեցաւ եւ վանք շինեց, Վե-  
 նետիկի հասարակապետութեան օգնութեամբն,  
 որուն կը վերաբերէր Մեթոն, Յովնան Հոռոմէն  
 գնաց ծպտեալ իր հայրենիքն ու Սեբաստիա  
 1702ին, եւ ի դարձին՝ երբ Պոլիս լսեց Աբբա-  
 Տօր Մեթոն հաստատուիլն, անոր քով գնաց,  
 վանքին մէջ հիւր ընդունուեցաւ, միաբանական  
 կեանք սկսաւ վարել՝ առանց միաբանի իրա-  
 ւունք մ'ունենալու, այլ ԱբբաՏօր կարգադրու-  
 թեամբ Միաբաններ ձեռնադրելու. առաջին ան-  
 գամ 1704ին լատին եկեղեցւոյ մէջ քահանայ  
 ձեռնադրած է միաբաններ: Սակայն միաբանից  
 հետ աղքատութեամբ ապրիլն իրեն դժուարին  
 գալուն՝ 1705ին դարձեալ արեւելք միսիոնի  
 գնաց, եւ շրջեցաւ ընդ աշխարհ. այս միջոցէն  
 միայն ճանօթ է որ 1706ին Սպանիայէն 58 դա-  
 հեկան ողորմութիւն զրկած է չքաւոր Աբբա-  
 Տօր: 1714ին տակաւին ԱբբաՏօրմէ հեռի էր,  
 վասն զի նոյն տարին ԱբբաՏայրն իր ձեռնա-  
 դրելի աշակերտները կորնթոսի մէջ լատին  
 Եպիսկոպոսին քահանայ ձեռնադրել տուաւ:  
 Յովնան 1718ին արդէն Հոռոմ կը գտնուէր